Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԳՄ ՄԱԾՁԲ-26/19

ք. Գավառ «02» փետրվարի 2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Մանուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և "Ավանտգարդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Ավետիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով՝

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն

ա) Չընդունել ծառայությունը իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը՝ ժամկետ նախատեսված լինելու դեպքում՝

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը՝

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ՝

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3 1) և հանձնման-ընդունման արձանագրության 2/երկու/ օրինակ (հավելված N 3).

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է. եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ.

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը

3 4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3 3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 820 000 (ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ. ներառյալ ԱԱՀ-ն [17]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները՝

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4 2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին՝ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը.

5 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5 1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5 2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4 1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով

5 4 Պայմանագրի 5 2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5 5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4 2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

5 7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7 1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7 2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության

7 3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար. Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7 5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը.

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7 8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7 9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www procurement am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը. Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __4__ էջից, կնքվում է երկու օրինակից որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը.

8 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ	«Ավանտգարդ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք Գավառ,	ՀՀ, ք Երևան, Գայի պող 14/3
Կենտրոնական Հրապարակ 7	ՀՎՀՀ 01060547
ՀՎՀՀ՝ 08428824	Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ 1510002448988985
ՀՎՀ 90017107820[illegible]	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝ Ա.Ավետիսյան
ստորագրություն	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ.

Հավելված N 1
«02» փետրվարի 2026թ կնքված
N ՀՀ ԳՄ ՄԱԾՁԲ-26/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111307/1	տեխնիկական բնութագիրը ներկայացված է՝ Հավելված N 1.1-ում	դրամ	820000	1	Ավտոմոբիլներ ի տեխնիկական սպասարկման կայան	մինչև 2026թ դեկտեմբերի 31-ը

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը
** ծառայության դիմաց վճարումը կատարվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08428824
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900171078299
Գլխավոր քարտուղար
_______________ Մ.Մանուկյան
ստորագրություն
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ավանտգարդ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գայի պող. 14/3
ՀՎՀՀ 01060547
Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 1510002448988985

Տնօրեն՝
_______________ Ա.Ավետիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1 /
«02» փետրվարի 2026թ կնքված
N ՀՀ ԳՄ ՄԱԾՁԲ-26/19 ծածկագրով պայմանագրի
ՀՀ դրամ

Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց*

Ձեռքբերվող ծառայության նկարագիր

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	5-տեղանոց մարդատար ա/մ Վոլվո EX40
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	
1	Օդորակիչի զտիչի փոխարինում	5000
2	Դիմապակու խոզանակի փոխարինում	2500
3	Ետնապակու խոզանակի փոխարինում	2500
4	Դիմապակու հեղուկ լիցքավորում	2500
5	Դիմապակու տեսախցիկ և դիմապակին մաքրել	10000
6	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում	20000
7	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում	20000
8	Արգելակման համակարգի հեղուկի փոխարինում	20000
9	Անտիֆրիզի փոխարինում	35000
10	Լուսարձակի ճշգրտում	10000
11	Օրագրային թարմացում	25000
12	Ել. մոտորի յուղի փոխարինում	30000
13	Մեքենայի թափքի վնասված դետալների ստուգում	30000
14	Ռադիատորի քողարկիչի փոխարինում	10000
15	Դիմացի թափարգելը հանել, տեղադրել	25000
16	Դիմացի թափարգելի ներկում	150000
17	Հետևի թափարգելը քանդել, հավաքել, արդյունքում փոխարինել վնասված դետալները	25000
18	Անվադողերի փոխարինում	5000
19	Ռադիատորի վոխարինում	52500
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1 Շարժիչ	
1	Օդորակիչի զտիչ	34200
2	Դիմապակու խոզանակ	34200
3	Ետնապակու խոզանակ	13500
4	Դիմապակու հեղուկ (1 լիտր)	3800
5	Առջևի արգելակման կոճղակ	84300
6	Հետևի արգելակման կոճղակ	65800
7	Արգելակման համակարգի հեղուկ (1 լիտր)	23000
8	Անտիֆրիզ (1 լիտր)	6400
9	Ել. մոտորի յուղ (1 լիտր)	30800
10	Սիլիկոն ափրեյ	12500
11	Դիմացի թափարգելի ներքևի հատված	121300
12	Դիմացի թափարգելի պաշտպանիչ	50200
13	Դիմացի թափարգելի բարշակի կապիարիչ	16700
14	Դիմացի թափարգելի ներքևի պլաստմասե հատված	59300

15	Ռադիատոր	185500
16	Ռադիատորի ամրակ աջ	4600
17	Ռադիատորի ամրակ ձախ	4600
18	Քամիչ	100
19	Անտիֆրիզ (1 լիտր)	5500
20	Կլոր շուշաթուղթ	400
21	Քառակուսի շուշաթուղթ	300
22	Լուծիչ	2000
23	Ինքնակպչուն մալավանդ	900
24	Փաթեթավորում	1500
25	Գրունտ	10500
26	Ծանրոց (100 գրամ)	1200
27	Ներկ (100 գրամ)	10500
28	Լաք (100 գրամ)	3100
29	Պետհամարանիշի պլաստմասա	7000

*Պարտադիր պայմաններ

Կատարողը պետք է նախապես գնի տրանսպորտային միջոցը, որի վերաբերյալ Պատվիրատուի կողմից նշվող էլ. փոստի հասցեին պետք է ուղարկվի գրավոր հաստատված գնության արդյունքները՝ նշելով մատուցվելիք ծառայությունների տեսակը (երը), չափման միավորը (երը), քանակը (երը) և ընդհանուր գումարը (երը)
Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 2 ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն 2,5 տոննա բարձրացնելու կարողությամբ.
Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուի համաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ
Սպասարկման ենթակա ավտոմերենաները, որոնց միաժամանակյա քանակը կարող է լինել մինչև 4, պետք է պահպանվեն փակ, տանիքածածկ, հսկվող տարածքում
Ավտոմեքենաների սպասարկումը, որոնց քանակը միաժամանակ կարող է լինել մինչև 4, պետք է սպասարկվեն առանձին դիտանցելով կամ ամրարձիչներով՝ մեկ վայրում
Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկակազմակերպչական պայմաններ
Տեխ. սպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա ստորև բերված նվազագույն հնարավորությունները՝ որակով և ժամանակին տեխնիկական սպասարկում կատարելու համար
փակ և պահպանվող տարածք նվազագույնը 4 ավտոմերենաների համար տեսահսկման համակարգ, պետական ծառայության կողմից 24 ժամ հսկողության իրականացում
տաքացվող բոքսեր 2 և ավելի ամրարձիչների վրա միաժամանակ աշխատելու հնարավորությամբ
լվացման կետ, ինչպես ավտոմոբիլի, այնպես էլ մեքենա-մասերի համար
դիտատեսակ
դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման համար անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում նաև ալյումինի և չուգունի ներկման, չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ.
Էվակուատոր 2 5տ նվազագույն բեռնատարողության, որը կանչը ստանալուց հետո 100 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխ.սպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր՝ հհ.
կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու համար
ունենա մեքենայում առկա էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն
կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի առանձին սարքավորումների, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ

վերը նշված աշխատանքները կատարելու համար ունենա արհեստավարժ մասնագետներ ոչ պակաս 3 տարվա աշխատանքային փորձով
Դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ, անվաբացքի կարգավորման ստենդ, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, մեղմիչների ստուգման ստենդ, լուսարձակների կարգավորման ստենդ, արգելակների ստուգման ստենդ
աշխատանքների վրա կատարվի ինժեներական վերահսկողություն .
Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ սպասարկման արագությունն ապահովելու նպատակով:
Պահեստամասերը պետք է լինեն նոր և բարձրորակ, գործարանային փաթեթավորմամբ
Ծանոթություն՝ Վերը նշված պահանջները Պատվիրատուի կողմից ենթակա են տեղում ստուգման մրցույթն ավարտվելուց հետո՝ հայտ ներկայացրած իրավաբանական անձի ներկայացուցչի մասնակցությամբ
Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում ծառայությունը չի ընդունվի
Երաշխիքներ *Ծառայությունների, պահեստամասերի և ռետինե դետալների համար նվազագույնը 6 ամիս*
Պահանջվող մասնագետներ *նվազագույնը 1 ավտոփականագործ* *նվազագույնը 1 շարժիչագործ* *նվազագույնը 1 ավտոէլեկտրիկ* *նվազագույնը 1 անվաբացքի ուղղման մասնագետ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08428824
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900171078299
Գլխավոր քարտուղար
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ավանտգարդ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գայի պող. 14/3
ՀՎՀՀ 01060547
Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 1510002448988985
Տնօրեն՝ ---------------------------Ա.Ավետիսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«02» փետրվարի 2026թ. կնքված
N ՀՀ ԳՄ ՄԱԾՁԲ-26/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ		534000	534000	692000	692000	692000	820000	820000	820000	820000	820000	820000	820000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս.*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08428824
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900171078299
Գլխավոր քարտուղար
ստորագրություն
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ավանտգարդ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գայի պող 14/3
ՀՎՀՀ 01060547
Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 1510002448988985

Տնօրեն՝ .... Ա.Ավետիսյան
(ստորագրություն)

Կ Տ

Հավելված 3
« 02» փետրվարի 2026թ կնքված
N ՀՀ ԳՄ ՄԱԾՁԲ-26/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» « _____ » 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են.

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3 1
«02» փետրվարի 2026թ կնքված
N ՀՀ ԳՄ ՄԱԾՁԲ-26/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը / Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն